



Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01-02-2019թթ. - 28-02-2019թթ. տվյալների ամփոփում

Հաշտարարի գրասենյակը 01-02-2019թթ. - 28-02-2019թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 654 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 633-ն են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքներից 57-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասն իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ, և ըստ էության, չեն պարունակում գույքային պահանջ):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոսնահարման փաստը:

01-02-2019թթ. - 28-02-2019թթ.. Հաշտարարի քննությանը ենթակա 576 բողոքներից 414-ն ընդունվել են քննության:

Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝	654
Վերաբերում են ֆինանսական համակարգին՝	633
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	57
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	576
2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝	414
2.1.1 Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝	265
Մեքենայի ԿԱՍԿՈ ապահովագրության հետ	4
Աջակցության ապահովագրության հետ	1
Առողջության ապահովագրության հետ	5
Գույքի ապահովագրության հետ	1
ԱՊՊԱ-ի հետ (ներառյալ Բյուրո)	254
2.1.2 Բանկերի դեմ, կապված են՝	127
Ավանդային գործարքների հետ	7
Վարկային գործարքների հետ	115
Վճարահաշվարկային գործարքների	5
2.1.3 Վարկային կազմակերպությունների դեմ	22

Գրավոր պահանջի ներկայացմամբ քննության ընդունված բողոքների էլքեր (հատ դեպք)՝ [*]	296
Մերժում	110
Մասնակի բավարարում	87
Հաշտեցում	76
Բավարարում	14
Դադարեցում	6
Պահանջի քննության մերժում	3

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ գանգահարելով (374) 60-70-11-11 հեռախոսահամարով կամ այցելելով Մ. Խորենացու փող., 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ: E-mail: info@fsm.am, Web: www.fsm.am

* Հաշվետու ժամանակաշրջանում հանգուցալուծված պահանջ-դիմումների էլքեր